

## ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին


Մենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան աուդիտի ենք ենթարկել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2009թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմված ֆինանսական հաշվետվությունները, որոնցից քաղվել են կից ներկայացված ընդհանրացված ֆինանսական հաշվետվությունները (2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական դրության մասին հաշվետվություն, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, համապարփակ եկամտի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններ): Մենք 2010թ ապրիլի 12-ին տվել ենք դրական եզրակացություն այն ֆինանսական հաշվետվությունների մասին, որոնցից քաղվել են կից ներկայացված ընդհանրացված ֆինանսական հաշվետվությունները:

Մեր կարծիքով կից ներկայացված ընդհանրացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են այն ֆինանսական հաշվետվություններին, որոնցից դրանք քաղվել են:

Բանկի ֆինանսական դրության, նշված ժամանակահատվածի համար նրա գործունեության արդյունքների և աուդիտի շրջանակների մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար, կից ներկայացված ընդհանրացված ֆինանսական հաշվետվությունները պետք է կարդացվեն դրանց հիմքում ընկած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ միասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝ Մ. Ալեքսանդարիան՝ ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2008 թ-ի սեպտեմբերի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)



Աուդիտի բաժնի ինստիտուտի գործընկեր՝ Մ. Տոնյանի



12 ապրիլի 2010թ.